ԶԵԿՈՒՅՑԱԳԻՐ

18 հունվար 2023թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆԻՆ

Ավագանու հանձնաժողովի նիստի վերաբերյալ

Հարգելի պարոն Բալասյան

Տեղեկացնում եմ Ձեզ, որ 2022 թվականի դեկտեմբերի 19-ի ավագանու նիստից անմիջապես հետո, երբ նիստով հաստատվել էին ավագանու հանձնաժողովների կազմերը, ավագանու անդամներին բանավոր տեղեկացրել եմ , որ անհրաժեշտ է հանձնաժողովների նիստեր հրավիրել՝ հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու և յուրաքանչյուր հանձնաժողովի համար նախագահ ընտրելու նպատակով: 2022 թվականի դեկտեմբերի 21-ին կայացավ Բյուրեղավան համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ եզրակացություններ տալու նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային, տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի նիստ, իսկ դեկտեմբերի 23-ին՝ գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական գործող հանձնաժողովի նիստ, որոնց ընթացքում հաստատվել են հանձնաժողովների աշխատակարգերը և ընտրվել են հանձնաժողովների նախագահներ: Մինչ այսօր սոցիալական, առողջապահության, բնության պահպանության հարցերի մշտական գործող հանձնաժողովի նսիտ գումարել չի ստացվում: Դեկտեմբերի 27-ի ավագանու նիստից առաջ հեռախոսազանգով համաձայնացրել էի հանձնաժողովի անդամների հետ՝ ավագանու նսիտից անմիջապես հետո հանձնաժողովի նիստ գումարելու համար: Սակայն հանձնաժողովի անդամ Ավագ Սահակյանը պատասխանեց, որ չի գալու նիստին, իսկ Վլադիմիր Վարդանյանը այդպես էլ չպատասխանեց զանգերին: Այս տարի ևս մի քանի անգամ հետաձգվել են նիստերը: Հեռախոսազանգով հանձնաժողովի անդամներ Վլադիմիր Վարդանյանի, Կարապետ Հարությունյանի և Վարդան Սուքիասյանի հետ կապ եմ հաստատել, սակայն Վլադիմիր Վարդանյանը երկու անգամ հեռախոսով հրաժարվել է գալ՝

ՔԱՐՏՈՒՂԱՐ ... ՔԱՐՏՈՒՂԱՐԱՆ
ՄՈՒՏՔ Ց-74/23
ԱՄՍԻՍ « 18 » 01 2023 թ.

առաջին անգամ պատճառաբանելով, որ գործեր ունի, երկրորդ անգամ՝ ատամնաբուժարան գնալու պատրվակով, իսկ Ավագ Սահակյանին չեմ զանգահարել, քանի որ վերջինս հրաժարվել է հանձնաժողովի անդամ լինելուց՝ նշելով, որ հնարավոր է հրաժարվի նաև ավագանու անդամակցությունից: Երեկ՝ 17/01/2023թվականին, ժամը 14.00-ին հրավիրված նիստին ներկայացան Վլադիմիր Վարդևանյանն ու Ավագ Սահակյանը, սակայն բացա էին Կարապետ Հարությունյանն ու Վարդան Սուքիասյանը: Նիստը չկայացավ, քանի որ հանձնաժողովների 4 անդամներից ներկա էին 2-ը:

Զեկուցող՝ Զարուհի Ապրեսյան